ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 նոյեմբերի 2022 թվականի N 1676-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 1407-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 1407-Ն որոշման N 2 հավելվածի 12-րդ և N 3 հավելվածի 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«	ք. Երևան Դ. Անհաղթի 10	հանրակացարան	1963	2008	4251.9	188298,6	100283,2	88015.4	N 24102016-01-0158	0,514771
		հանրակացարան	1963	2003	4806.5	246852,9	177344,1	69508,8		
		կաթսայատուն	2008	2008	73.9	6187,4	3764,0	2423,4		
		պահեստ	2008	2008	45.6	3244,0	1973,4	1270,6		
		Մարզահրապա-ռակի ցանկապատ	2008	2008	3,8	500,0	304,2	195,8		
		պարիսպ	1963	1963	0.6 /1,2 խմ/	1,8	1,8	0		

		պարիսպ	1963	1963	61.6 /160.2 խմ/	184.8	184.8	0.0		
		պարիսպ	1963	1963	49 /29.4 խմ/	147.0	147.0	0.0		
		պարիսպ			6.5 /14.3 խմ/	19.5	19.5	0		
		պարիսպ			17.2 /37.8 խմ/	51.6	0,0	51.6		
		Հուշարձան խաչքար	1994	1994		280.0	0,0	280,0		»:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի հետ կնքել Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթի 10 հասցեում գտնվող անշարժ գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ